ՍՈՒՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 5 Կ. — ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ — № 2

ԲԱՆԲԵՐ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

№ 2 — ԱՍՏՐԱԽԱՆ, ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍ 31. — 1915 Թ.

Հասցէն՝ Աստրախան, „ԲԱՆԲԵՐ“-ի խմբագրութիւն։
Հեռախօս № 182.

Астрахань,
Редакція «БАНБЕРЪ».

Astrakhan
Redaction „BAN BER“.
Телефонъ 182.

Խմբագրութեանս պայմանները.
Մեր աշխատակիցներին և թղթակիցներին խնդրում [ենք] յօդւածները գրել պարզ, մաքուր և թղթի առաջին [երես]ին միայն։
Խմբագրութիւնը իրեն է վերապահում ուղղագրութեան ձևը և փոփոխութիւնները բացի պայմանաւորւած յօդւածներից։
Վերադարձնւում են բանաստեղծականներն ու այն յօդւածները, որոնք երեք թերթից աւելի ծաւալ ունեն։
Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել 45 կ. վճար մարկաներով։
Բաժանորդները, թերթը չստանալու դէպքում, պարտաւոր են տեղեկացնել, հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն պատասխանատու չէ համարում։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր անկացած հայերէն գիրերը միակ ռուս գրաշարի անկարողութեան և տեխնիկական որոշ անյարմարութիւնների պատճառով տպւած ենք ժամանակաւորապէս «Բանբեր»ը լոյս ընծայել ներկայ փոքրացրած ծաւալով։

Աստրախան 30 մայիս

Ռուս-թիւրքական պատերազմը առաջացրեց տաճկահայ և մասամբ պարսկահայ փախստականների մի վիթխարի հոսանք դէպի Կովկաս։

Մօտ 60—70 հազար [illegible] բազդից լքուած, անտուն, անօ[թի], [ա]պրուստի միջոցներից զ[ուրկ] հայեր, Տաճկահայաստանի [սա]հմանամերձ գաւառներից հազիւ իրենց կեանքը ազատելով վերահաս վտանգից, եկել ապաստանել են Կովկասի հայ գիւղերում։

Փախստականների այդ մեծ հոսանքը, որը դեռ ևս շարունակւում է, հէնց սկզբից շարժման, իրարանցման մէջ դրեց հայ հասարակութեան վերին մասերը, բուրժուազիան, կղերականութիւնը և դրանց յարուած ինտելիգենցիան։ Հրապարակ եկան վերսեն անունների տակ մի շարք ընկերութիւններ, կոմիտէներ, յանձնախմբեր արտաքուստ միանգամայն համակրելի և օգտակար նպատակներով։ Փախստականներին օգնելու կոչուած այդ մարմինները ոչինչ չը խնայեցին իրենց վրայ կենտրոնացնելու հասարակութեան ուշադրութիւնը և իրենց գանձարանները ուղղել տալու նուիրատուութիւնների հոսանքը։ Եւ այդպիսի մաքուր, ազնիւ, մարդասիրական մի գործ, ինչպիսին է տասնեակ հազարաւոր սոված, կիսամերկ և անտուն թշուառների խնամքը և օգնութիւնը, հայ բուրժուական խաւերի ձեռքում դարձաւ նեղ-թայֆայական կամ չարչիական հաշիւների մի ընդարձակ ասպարէզ, հրապարակ հանելով տիրող դասակարգի հոգու ամբողջ մերկութիւնը։ Չարչիական ձեռքը սիստեմի վերածեցին։ Իւրաքանչիւրը այդ մարմիններից մի առանձին պաֆոսով խօսում էր և գրում իր գործունէութեան մասին և ցեխ, մուր ակնարկներ շպրտում հակառակ որդների հասցէին։ Մարմիններից մէկին նոյնիսկ սկսեցին մեղադրել ցեղծման մէջ և հրապարակով հաշիւ պահանջեցին, բայց այդ հաշիւը չը գրւեց, որը աւելի ևս տեղիք տւեց կասկածների։ Հասարակութեանը այդ բոլորը միմիայն զզւանք կարող էին պատճառել և նւազացնել նրա հաւատը դէպի վերոյիշեալ մարմինների օգտակար գործունէութիւնը։ Հաշւի առնելով այդ բոլորը և ցանկանալով մի կերպ դուրս գալ այդ անպատւաբեր դրութիւնից փախստականներին օգնող ընկերութիւնները միտք յղացան հրաւիրելու համագումար, ստեղծելու համար մի ընդհանուր և ներդաշնակ գործունէութիւն և բաշ սովորութեան բանեցին էջմիածնի ճանապարհը։ Սակայն էջմիածնի համագումարը, որին ներկայ էին միմիայն բուրժուազիայի և հոգևորականութեան ներկայացուցիչները, նոյնպէս անկարող եղաւ վերջ տալ թայֆայականութեանը ու պառակտմանը։

Եւ մինչ փախստականներին օգնող մարմինները այնտեղ իրենց ներքին հաշիւներով էին զբաղւած Կովկասի չարքաշ հայ գիւղացիութիւնը և բանւորութիւնը, մի անօրինակելի ինքնազոհութեամբ, իրենց ուսերի վրայ էին տանում փախստականներին օգնելու գործի գրեթէ ամբողջ ծանրութիւնը։ Հայ գիւղացին մտնում և օթեան էր տալիս իր մօտ ապաստանած փախստական հային, տաքուն, յոյնին, ամոքում նրանց ցաւերը յոյս և հաւատ ներշնչում դէպի լուսաւոր մօտալուտ ապագան։ Նա, գիւղացին, այդ անում էր լռելեայն, առանց աղմուկի, առանց պրետենզիաների, զոհողութիւնների ծանր գնով, մի բան, որ խոստովանում են հէնց իրենք փախստականներին օգնող պաշտօնական մարմինները։ Դարձեալ հայ բանւորութիւնն էր, որ լեցնում էր կամաւորների խմբերի շարքերը և անցնում սահմանի այն կողմը իր արեան գնով փրկելու բոլոր տանջւածների և գրկւածների ստրկական դարաւոր կապանքները։ Եւ ժողովրդի այդ մաքուր, անձնազոհ և ճնշող մեծամասնութիւն կազմող տարրը, միշտ դուրս է թողնւած ընդհանուր հասարակական ձեռնարկներից։

Մեր հասարակական և ազգային գործերի մոնոպոլիստները շարունակ ձգնել են խեղդել դեմոկրատիայի ձայնը, թոյլ չը տալ նրա ասպարէզ գալը, հաւատացնելով, որ դրան կարիք չը կայ, որ իրենք «ընտրեալները» ամէն ինչ կը կարգադրեն, ամէն ինչ կը հոգան։ Էջմիածնի համագումարը հրաւիրողները աւելորդ էին համարել հրաւիրելու նաև գիւղացիութեան և բանւորութեան ներկայացուցիչներին ինչպէս և միշտ աւելորդ են համարել նրանց մասնակցութիւնը բոլոր այլ համագումարներին և ժողովներին, յատկացնելով այդ կենսունակ և ստեղծագործող տարրին կամակատարի լուռ և անխօս դերը։

Բայց այլ ևս բաւական է ժողովրդի այդ անսահման շահագործումը... Մոնոպոլիստները չեն, որ պիտի ցոյց տան մեզ կեանքի ուղին, գործելու եղանակը, այդ վերապահւած է միայն և միմիայն ժողովուրդին, նրա դեմոկրատ տարրերին։

ՆՈՐ ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԻՔԸ

II.

Անցեալ յօդուածով մենք կամեցանք պարզել այն միտքը, որ մեր այժմեան մամուլը չի կարողանում և չի էլ կարող ըմբռնել լայն խաւերի կենսունակ. պահանջները, ուստի կամայ և ակամայ մատների արանքով է նայում մի շարք խնդիրներին։

Այդ երևոյթը ամբողջապէս վերագրւումէ պատմական մոմենտի վերապրումներին։ Սակայն հայ միտքը վերջին տասն տարուայ ընթացքում ոտք է դրել նոր ճանապարհի վրայ և այս տեղ նա կամենում է ձեռք բերել նոր նպատակներ։ Նախկին փայփայած պրօբլէմները շատ աննշան են այն խնդիրների հանդէպ, որոնք ցանկալի են ամեն կերպ մեր առաջխաղացման համար։

Բայց դրա համար պէտք է լինի այդ մտքի հասունութիւնը մեր կեանքի մէջ։ Մենք գտնում ենք, որ այդ կայ։ Օտարոտի կը լինէր եթէ այդ չը լինէր ներկայ իրականութեան մէջ, քանի որ հայ կեանքը ոտք է դրել մի տերրիտորիայի վրայ, որտեղ կապիտալիստական զարգացման ենթարկւածէ պետական կեանքը, իսկ ներկայ համաշխարհային պատերազմը խոստանումէ այդ ընթացքին աւելի արագ թափ պարգևել։

Եւ այդ կեանքը երևան է բերել հասարակականնոր խմբաւորումներ, ի թիւս որոց և բանւորական-դեմոկրատիա։

Այդ խաւի գոյութիւնն անուրանալի է, և միմիայն ներկայ մամուլի մէջ է, որ նա չէ կարողանում գտնել իր պարզ և որոշ ձևակերպումը։ Այդ դեմոկրատիայի մէջ երևան եկող բնորոշ տարբերութիւնները և մտածելակերպի եղանակները իրանց հերթին սպասում են լուսաբանութեան։ Եւ եթէ մինչև օրս չի կարողացել մեր ազգի մէջ եղած այդ կենսունակ տարրը երևան գալ, այստեղ բացի մամուլի բացասիկ դրութիւնից՝ մեծ արգելք են հանդիսացել հէնց տիրող հովերը։ Տարիների ընթացքում այդ հովերը, թևալով ազատ քննադատական ոգուց, ստեղծել են մի դրամադրութիւն, որին յարել են ոչ միայն բուրժուական ինտելիգենտ ուժերը, այլ և նրանք որոնք իրանց թէ դասակարգային շահերով և թէ հոգու էութեամբ չեն բաժանում այդ տեսակէտները։

Մենք լաւ գիտենք, որ ինտելիգենտ ուժին միայն չի վերապահած նոր տենդենցների երևան հանելը, բայց կարևոր է, որ եղած ուժերն էլ բռնեն իրենց հոգու պահանջի համապատասխան տեսակէտները և այդպիսով լսելի անեն գոյութիւն ունեցող ձայնը։ Այդ դէպքում կարող էր յայտնի չափով թարգման հանդիսանալ նոր մամուլը։


Այդ բոլոր երևոյթները գալիս են վկայելու մի անուրանալի փաստ, որ մեզ հարկաւոր է մամուլ, որ կարողանայ թարգման հանդիսանալ մեր բուն դեմոկրատիայի իղձերի, այլ խօսքով նոր մամուլը։ Նոր մամուլը պէտք է տայ օրէկանիվ հիմունքներ մեր քաղաքական և հասարակական կեանքի ուսումնասիրութեան համար։

Առ այժմ այսքանը պիտի պարզեն մեր գրածներից, որ մեր ներկայ մամուլը մի խառնուրդ է, որը չահագրգուած չէ լուսաբանելու ժողովրդական մասսաների տնտեսական և քաղաքական կարիքները այն ձևակերպումներով, որոնք իրօք գոյութիւն ունեն կեանքի մէջ։

Եւ մեր գրականութեան ու մամուլի զարգացման անկեղծ ջատագովները, եթէ կամենում են ծառայած լինել ժողովրդական կարիքներին, պէտք է պարզեն իրանց համար ամենից առաջ այն հանգամանքը, որ առողջ մամուլը պէտք է գոյութիւնը պահէ ոչ թէ եղած համակրութիւնների կամ չարլօն վերագնահատումների վրայ յենւած։ Այդ հանգամանքների մէջ միայն կարող է առաջ գալ նոր մամուլը։ Որքան էլ ներկայ մամուլը ուզենայ ծառայած լինել դեմոսի շահերին, այնուամենայնիւ այդ վերաբերմունքը մի քայլ առաջ կարելի է համարել միայն։ Մինչդեռ չենք կարող չասել, որ այդ մամուլը մի շարք խնդիրներում ոչ միայն չի կարող ճիշդ թարգմանը հանդիսանալ մեր ընդգծած իղձերի, այլ շատ անգամ նա ստիպւած կը լինի լռել աւելին քան այդ պէտք էր։

Դեմոկրատիան պէտք է ունենայ իւր օրգանը։

ՎՈՐԲՄԱՆ



ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

I

Արտասահմանի բազմաթիւ հայ գաղութների մէջ Ամերիկայինը, իւր կենսունակութեամբ, կեանքի առանձնայատուկ պայմաններով, ազգային—հասարակական տենդենցներով բացառիկ տեղ է գրաւում։

Ներկայումս ամերիկահայ գաղութը բաղկացած է մօտաւորապէս 80 հազար հոգուց, մեծ մասը ցրւած Արևելեան նահանգներում և մասամբ Կալիֆօրնիայում և Կանադայում։ Գաղթականութեան մնացորդ մասը կազմում են տաճկահայերը, որոնց ուժգին հոսանքը դէպի Նոր Աշխարհը սկիզբն առեց Տաճկաստանում հայկական ջարդերը սկսելու օրից։ Թողնելով արիւնաներկ վաթանը, սպանւած և կենդանի հարազատներին, այրւած օջախը, տաճկահայը, գլխաւորապէս երիտասարդ, աշխատանքի ընդունակ տարրը, արեան և կրակի միջից դիմում էր դէպի հեռաւոր ծանօթների անծանօթ աշխարհը։ Այդ օրւանից սկսւում էր խեղճ հայ գաղթողի ոդիսականը։ Անցնելով հայ վաշխառուի բովից, ճեղքելով կառավարչական և այլ անհամար խոչնդոտներ, դուրս էր պրծնում նա դժոխքի աշխարհից, որպէսզի ընկնի գաղթականներին փոխադրող նաւային ընկերութիւնների ագենտների, կողոպտիչ սմսարների ճիրանները։ Անհագին զրկանքներ, տանջանքներ կրելուց յետոյ վերջապէս յաջողւումէր հասնել Ամերիկա—մի անծանօթ աշխարհ, որի ոչ լեզուին, ոչ սովորութիւններին և ոչ էլ քաղաքական-տնտեսական ստրուկտուրային էր նա ծանօթ։

Կապիտալիստական այդպիսի մի վիթխարի ժխորում, ինչպիսին է Ամերիկան, կեանքի նահապետական պայմաններում մնացած մի խարբերդցու, մի ակնցու կամ մի բալուեցու համար սեփական ուժերի վրայ կռթնած ոտքի տակի ամուր հող ստեղծելը, հեշտ բան չէր։ Նորեկին օգնութեան էին գալիս համերկրացիները, յաճախ գործարաններին էժան բանւորներ մատակարարող ագենտները։ Ամերիկայում գաղթական բանւորների աշխատանքը համեմատաբար շատ էժան է գնահատւում քան տեղացիներինը, իսկ լեզու չը գիտցող, գործարանային կեանքին խոպան անծանօթ և անվարժ հայ բանւորինը առաւել ևս։ Այդ հանգամանքի շնորհիւ հայ բանւորներին ընդհանրապէս բաժին էր ընկնում ամենածանր ու աշխատանքը, որը և յաճախ նրանց անսովոր օրգանիզմի քայքայման պատճառ դառնում։

Մինչ ամերիկացի բանւորները շնորհիւ իրենց բարձր գիտակցութեանը ունեն իրենց լաւ կազմակերպւած բանւորական միութիւնները և կարողանում են յաջող կերպով դասակարգային պայքար մղել ընդդէմ կապիտալիստների, հայ անգիտակից բանւորներին թւում էր յաճախ կատարել շտրէյկբրեխերների տխուր և անպատւաբեր դերը։ Այդ երևոյթը ինքնըստինքեան չէր կարող մի առանձին համակրանք առաջացնել ամերիկացի բանւորների մէջ դէպի իրենց հայ ընկերները։ Դեռ մինչև վերջերս հայ բանւորները Ամերիկայում դասւում էին քիւրդ, թիւրք, նոյն իսկ չինացի կուլիների, այսինքն կուլտուրապէս աւելի յետամնաց և դասակարգային շահերի գիտակցութիւնից զուրկ ազգերի բանւորների շարքում։ Բարեբաղդաբար վերջին տարիները Ամերիկայում գործող հայ քաղաքական կազմակերպութիւններից Հնչակեան կուսակցութիւնը, իբրև միակ բանւորական կազմակերպութիւնը հայերիս մէջ, ծաւալելով ամերիկահայ գաղութի մէջ, եռանդուն կերպով ձեռնարկեց հայ բանւորների կազմակերպութեան գործին։ Հնչակեանների հրապարակային դասախօսութիւնները ու ժողովները, „Երիտասարդ Հայաստան"-ի մղած բուռն պայքարը մեծ չափով նպաստեցին ամերիկահայ բանւորութեան դասակարգային գիտակցութեան զարգացմանը։ Շնորհիւ գործ դրւած այդ ջանքերին, ամերիկահայ բանւորները, որոնք հայ գաղութի 90% տոկոսն են կազմում, այսօր այլ ևս չեն գտնւում նախկին անգիտակից և անկերպարան վիճակի մէջ։ Հայ բանւորութեան գիտակից և կազմակերպւած մասը այժմ աւելի մօտ և մտերիմ յարաբերութեան մէջ է իւր տեղացի ընկերների հետ, նրանց հետ կողք կողքի կանգնած, հաւասար թափով միասին մղում են դասակարգային պայքարը։

Դասակարգային շահերի գիտակցութեան այդ զարթնումը ինքնըստինքեան մի վերին աստիճանի մխիթարական երևոյթ է, սակայն ամերիկահայ բանւորութիւնը իւր կենսունակութիւնը ցոյց է տալիս նաև բանւորական ասպարէզից դուրս։ Նա երբեք չի կտրում իւր բարոյական—հոգեկան կապը ծննդավայրի հետ։ Իւր չարքաշ աշխատանքի և անսահման խնայողութեան ու զրկանքի գնով ձեռք բերած դոլլարներից հոգալով հեռու հայրենիքում իւր թողած հարազատների ծախքը, կառավարութեան ու քիւրդ բէգերի ծանր հարկերը, վաշխառուի հրէշաւոր տոկոսները, նա չի մոռանում նաև մաս հանել իւր ծննդավայրի կրթական-կուլտուրական հաստատութիւններին։ Հայաստանի գիւղական դպրոցների մեծ մասը իրենց գոյութիւնը պարտական են այդ գիւղերից Ամերիկա գնացած հայ բանւորներին։

Ամերիկայում գոյութիւն ունեցող բազմաթիւ «Ուսումնասիրաց ընկերութիւնները», որոնք երկրում պահում են մեծ թւով դպրոցներ, արգիւնք են հայ բանւորութեան անսահման գոհողութեանը, մի բան որ հազւագիւտ է հասարակական այլ շրջաններում։

Հետևեալ անգամ մենք կը խօսենք ամերիկահայ կեանքի այլ կողմերի մասին։

Վ. ՄԱՐՍԵԱՆ





ԱՇՈՏ

(Տիկին Սաթենիկ Մելիք Առաքելեան)

Հայ կնոջ մասնակցութիւնը հայ ժողովրդի ազատագրական գործում նոր չէ։ Շապէնները, Հաւօէները, Սըրբուհիները և շատ ուրիշները իրենց պատւաւոր տեղը ունեն գրւած տաճկահայ յեղափոխութեան պատմութեան էջերում։ Սասունում, Զէյթունում ապստամբութիւնների ժամանակ հայ կինը նոյնպէս քաջութեան և հերոսութեան անթիւ օրինակներ է տւել։

Կովկասում սկսած կամաւորների խմբերի կազմակերպումը և նրանց առաջացրած ընդհանուր ոգևորութիւնը ժողովրդի զանազան խաւերում չէր կարող աննկատելի մնալ հայ կնոջ համար և առաջ չը բերել նրա մասնակցութիւնը։

Տիկին Սաթենիկը առաջիններից մէկը եղաւ հայ կանանցից, որը մի կողմը ձգելով կնոջ վերաբերեալ մեր մէջ արմատացած նախապաշարումները, հագաւ զինւորի կամաւորի համազգեստ և գնաց դէպի ռազմաբեմ, ուր նա գտնւում է հէնց սկզբից ի վեր։ Սկզբում նա [illegible] համազգեստի խմբի մէջ, սակայն երբ յետոյ դայում կազմեց իւր [illegible] ներից հայ կամաւորների [illegible] բանակը, նա թողեց Համազասպի խումբը և միացաւ իւր ընկերներին։ Սաթենիկ Մելիք Առաքելեանը բնիկ ղարաբաղցի է Խնաբադ գիւղից, ամուսնացած է, սակայն ամուսինը քաղաքական յանցանքի համար աքսորւած է Սիբիր։ Հէնց այդ հանգամանքը ստիպել է Սաթենիկին կամաւորների շարքը մտնել իւր ամուսնու թողած պակասը ծածկելու համար։ Տիկ. մասնակցելէ Ալաշկերտի և Դալնձակի կռիւներում (հայ-թիւրքական ընդհարումների ժամանակ) որպէս յայտնի հրացանաձիգ։



ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԸ

Մօտ վեց ամիս սրանից առաջ Աստրախանում կազմեց „Հայկական կոմիտէ" անունով մի մարմին նպատակ ունենալով նիւթական օգնութիւն հասցնել Կովկասում հաւաքւած հայ փախստականներին և կամաւորների խմբերին։ Աստրախանի հայ գաղութը, հակառակ նրան որ ինքը միշտ շատ թոյլ կապ է պահպանել հայկական կենտրոնների հետ և այդտեղերում կատարւած դէպքերը չափազանց թոյլ արձագանգ գտել մեր ներս և դէպի ընդհանուր խնդիրները անտարբեր հասարակութեան մէջ,

այս անգամ ոգևորուած արձագանք տուեց Կոմիտէի արած կոչին և կարճ միջոցում հանգանակեց մօտ 45 հազար րուբլու մի խոշոր գումար։ Աստրախանի կոմիտէտը ի նկատի ունենալով, որ այդ ժամանակ Կովկասում հրապարակ էին եկել Ազգային բիւրօն և ապա հայկական կենտրոնական կոմիտէտը, որոնք իրենց ձեռքն էին կենտրոնացրել թէ կամաւորների և թէ փախստականներին օգնելու գործը և հաւատ ընծայելով որ այդ մարմինները անկուսակցական են և կազմուած են հասարակական զանազան խաւերի ներկայացուցիչներից, փոխադրեցին իրենց հանգանակած գումարի մեծագոյն մասը մօտ 40 հազար րուբլի։ Ապա Աստրախանի կոմիտէտը մի խումբ երիդասարդների կողմից եղած դիմումներից յետոյ, որոշեց բացի դրամից օգնել նաև կամաւորներով, որի համար և թոյլտուութիւն խնդրեց բիւրօյից, սակայն այս վերջինս որոշ միտումներով, որոնց պատճառը պարզւեց յետագայում, ընդդիմացաւ և հրահանգեց կամաւորներ չուղարկել և միայն տեղական կոմիտէտի կրկնակի պահանջներից յետոյ Բիւրօն հարկադրուեց համաձայնել։

Աստրախանցիները բուռն ոգևորութեամբ և չը տեսնուած օվացիաներով ճանապարհ դցեցին կամաւորների առաջին փոքրիկ խումբը ընդամենը 11 հոգուց բաղկացած, բայց թէ այդ խումբը ինչ ընդունելութիւն գտաւ Թիֆլիսի Ազգային Բիւրօյի կողմից այդ հասարակութեանը լաւ յայտնի է „Մշակ"ում տպուած մօտ 30 կամաւորների ստորագրութեամբ նամակից։ Աստրախանի կամաւորները փոխանակ աջակցութեան միմիայն կոպիտ վարմունքի հանդիպելով Բիւրօյի կողմից ստիպուած եղան բաւականին ժամանակ թափառել Թիֆլիսի փողոցներում և ապա անհագին դժուարութիւններից յետոյ կողմնակի օգնութեան շնորհիւ, ճանապարհին իրենց հետ միացած ընկերների հետ մեկնեցին դէպի ռազմաճակատ մտնելով հայկական կամաւորների վեցերորդ բանակի մէջ, որոնք այժմ գտնւում են առաջաւոր դիրքերում։

Մեր վերև յիշած համառօտ տեղեկութիւնները հասարակութեան լայն խաւերին թւում են անծանօթ, և շատ իրաւացի տրտունջներ են լսւում թէ ինչու տեղական կոմիտէտը զլանում է գիտակ պահել Աստրախանցիներին այդ հարցերի շուրջը կատարուած անցուդարձերին և որը ամենագլխաւորն է չի ներկայացնում հասարակութեանը թէ ինչ գործադրութիւն ստացան Ազգային Բիւրօ կոչւող մարմին փոխադրուած գումարները, կամ ինչ վիճակի մէջ է գտնւում Կովկասում փախստականներին օգնելու կամ կամաւորական գործը։

Ճիշդ է, մենք գիտենք, որ տեղական կոմիտէտը, ինքը ևս շարունակ աշխատել է Բիւրօյից այս վերջինի բարոյական և նիւթական հաշիւները ստանալ, սակայն ապարդիւն։ Այդ իսկ պատճառով տեղական կոմիտէտը վերջերս փոխադրելով Էջմիածնի կարգադրիչ յանձնախմբին 3000 րուբլի, մերժել էր նման օգնութիւն ցոյց տալ Թիֆլիսի Բիւրօյին, հակառակ այս վերջինի դիմումին, մինչև որ Բիւրօն չը ներկայացնէ իւր հաշիւները։

Այդ այդպէս լինելով հանդերձ Աստրախանի կոմիտէտը պէտք է վերջնականապէս վճռի թէ ում հետ է ինքը կապ պահպանելու Էջմիածնի կենտրոնական կարգադրիչ յանձնախմբի թէ Թիֆլիսի Բիւրօյի հետ, քանի որ վերջին դէպքում տեղական հասարակութիւնը դժւար թէ շարունակի իւր նախկին համակրական վերաբերմունքը դէպի Աստրախանի կոմիտէտը։

Պ. Դ. Հ.

ԱՍՏՐԱԽԱՆԸ — ԾԱՅՐԱԳԱՒԱՌՆԵՐԻ ՎՆԱՍՈՒԱԾ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ

—

Այսօր երրորդ և վերջին օրն է ինչ Մեծ Իշխանուհի Տատիանա Նիկոլայեւնայի անուան կոմիտէտը տուփերով ժողովարարութիւն է կատարում քաղաքում, յօգուտ ծայրագաւառներում պատերազմից վնասուած ազգաբնակութեան։

Ո՞ւմը յայտնի չեն այն արիւնոտ մարտի սոսկալի հետևանքները տեղական ազգաբնակութեան համար, որոնք այսօր կատարւում են Լեհաստանում, Գալիցիայում, Լիտվայում և Անդրկովկասում։ Թշնամին կոտորում, ոչնչացնում, թալանում է ամեն ինչ և սարսափահար ազգաբնակութիւնը թողնելով իւր ամբողջ ունեցածը փախչում է հայրենի քաղաքներից, գիւղերից։ Ծանր է այդ փախստականների վիճակը և կարիքը մեծ։ Պէտք է շտապել օգնութեան հասնել պատերազմի այդ զոհերին և Աստրախանի հասարակութիւնը այս անգամ ևս չի զլանայ իւր եղբայրական օգնութեան ձեռքը մեկնելու թշւառներին։

Այսօր տեղի կունենան մեծ զբօսանքներ քաղաքի Նիկոլաևեան պարկում և «Կավկազ և Մերկուրիյ» ընկ. „Бородино" նաւի վրայ ի նպաստ վերոյիշեալ կոմիտէտի։



ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

◆ Վերջերս ստացուած տեղեկութիւնների համաձայն Զէյթունում ծագած ապստամբութիւնը գնալով ընդունում է համաժողովրդական բնաւորութիւն։ Տղամարդկանց հետ հաւասարապէս կռւում են նաև կանայք։

◆ Վանի վալի Ջեվդեթ փաշան ապստամբներին արած իւր վերջին դիմումի մէջ թւելով մի շարք պատժական միջոցներ, որոնք ձեռնարկուած են Թիւրքիայում հայերի դէմ, առաջարկել էր ապստամբներին անմիջապէս զէնքերը ցած դնել և առանց որ և է պայմանի անձնատուր լինել կառավարութեանը, յոյս դնելով նրա մարդասիրութեան վրայ։

◆ Ամիսներից ի վեր Ամերիկայի հայ գաղութի մէջ կազմւել է և գործում է „Ազգային Պաշտպանութեան Ամերիկայի Յանձնախումբ" անունով մի մարմին որի մէջ մտնում են քաղաքական բոլոր կազմակերպութիւնները, բացի դաշնակցականներից և „ազգային Առաջնորդարանը։ Յանձնախմբի ատենապետն է Մ. Սմպադի, իսկ ատենադպիրը Ա. Ն. Նազար։ Յանձնախումբը արդէն հանգանակութիւն է բացել Ամերիկայում յօգուտ հայ կամաւորների և դրամի մի մասը արդէն փոխադրել Էջմիածին կաթուղիկոսին։

◆ Բուլղարիայից մեզ հաղորդում են „Կիլիկիայում և Փոքր Հայքում տեղական հայ ազգաբնակութիւնը Հնչակեանների ղեկավարութեամբ ապստամբել է և արդէն զինուած ընդհարումներ են տեղի ունեցել։ Մանրամասնութիւնները յաջորդիւ"։

◆ Մեր ստացած տեղեկութիւնների համաձայն Կովկասում կազմւում է հայ կամաւորների եօթերորդ վաշտը, որը պիտի գործէ վեցերորդ վաշտի հետ միասին։

Կղըլ-Դիղէ, 6 մայիսի

Այս տարւայ Ժ. 11-ին հայ կամաւորների գունդը առաջինը մտաւ պատմական Վանը, և այդպիսով ազատեցին տասնեակ հազար հայեր մօտալուտ մահվանից։ Բայց սրանով հարցը չը վերջացաւ։ Գազանացած քիւրդ խուժանը այժմ սկսել 'է իր սիրած գործը Բիթլիսի, Մուշի, Դիարբէքիրի և Կիլիկիայի շրջաններում։

Սուրհանդակները սոսկալի դէպքեր են պատմում։ Դիարբէքիրի շրջանում հայերը նոյնպէս դիմել են ինքնապաշտպանութեան և սուրը ձեռքին վճռել են մեռնել։ Վանը փրկվեց, շնորհիւ իր հերոսական դիմադրութեան։ Եթէ մի 5 օր էլ ուշանար օգնութիւնը, ամեն ինչ կորած էր։ Ապստամբների փամփուշտները արդէն վերջացած են եղել։ Մի մասը վերջին օրերս եղած վառօդից փամփուշտներ է պատրաստելիս եղել և հասարակ արճճի կտորները գնդակի տեղ ծառայեցրել ու հերոսական դիմադրութիւնը հասցրել պատուաբեր վախճանին։


Հայ կամաւորների գունդը համարեայ քառապատկվել է։

Մեր զօրքերը, ռազմական լաւագոյն պայմանների տակ, անշուշտ կարող կը լինեն շուտով գրաւել և Դիարբէքիրը, որովհետև Դիարբէքիրի հայերն էլ, ինչպէս ասացի, պարզել են ապստամբութեան դրօշակը։

Նոյն հերոսական կռիւը մղվում է և Մարաշում, Զէյթունում։ Նրանք դրսից սպասում են օժանդակութեան և խրախոյսի։ Իսկ այդ խրախոյսը այժմ միայն զէնքի շաչիւնն է և հրացանի գնդակը։

Արգար Պայազատ

„Մշակ"



ԼՈՒՐԵՐ

◆ Այսօր պատարագից յետ, ցերեկուայ 12 ժամին, թեմական դպրոցի դահլիճում նշանակւած է ծխականների ընդհանուր ժողով օրակարգի մէջ եղած եօթն հարցերի համար, որոնց թւումն են Ազգատաց հոգաբարձութեան 1915 թւի նախահաշւի հաստատութիւնը և հանգուցեալ Գէորգ քահանայ Մկրտումեանի յիշատակը յաւերժացնելու հարցերը։

◆ Մեզ տեղեկացնում են, որ Աստրախանի Առաջնորդ Մխիթար եպիսկոպոսը արդէն կարգադրել է կոնսիստորիային հանգուցեալ Գէորգ քհյ Մկրտումեանի տեղ նոր քահանայի ընտրութեան հարցը մտցնել ծխական ժողովի օրակարգի մէջ։

◆ Այս տարի Նիժնի տօնավաճառում քահանայագործելու նշանակւած էր հանգուցեալ Գ. ք. Մկրտումեանը, այժմ մեզ յայտնում են թէ չը նայելով քահանաների, երէցփոխի և հանգանակիչ մանկաժողովի դիմումներին, որ այս տարին համարել հանգուցեալի հերթը և նրա տեղ համաձայնութիւն տւածները, գնան և արդիւնքը հասցնեն ընտանիքին՝ Առաջնորդը մերժել է և այս տարուայ Նիժնիի հերթը յատկացրել է Ղզլարի քահանաներից մէկին։

◆ Աստրախանի Առաջնորդը և կոնսիստորիան ստացել են Էջմիածնի հրատարակած ծխական նոր կանոնադրութիւնը, որը մօտ օրերս երևի կը յանձնւի գործադրութեան։

Նոր կանոնադրութեամբ, որը հաստատուած է Կաթողիկոսի կողմից, կանայք զրկուած են ձայնի իրաւունքից և արական սեռը իրաւասու է համարւում սկսած 25 տարեկանից։

◆ Առաջիկայ համարից կսկսենք տպագրել Գալուստ քհյ Բարտաշխանի յօդուածները հանգ. Գէորգ քհյ Մկրտումեանի ճանապարհորդութեան մասին։

◆ Ամսոյս 26-ին վախճանւեց և 27-ին թաղւեց Աստրախանի պաշտօնաթող ծերունի Դաւիթ քհյ Դադաշխանը 81 տարեկան հասակում։

◆ Հայկական Կոմիտէի վերջին նիստում Կովկասից նոր վերադարձած պ. Ց. Տէր Ղևոնդեանը տեղեկութիւններ հաղորդեց փախստականներին օգնելու գործի ներկայ վիճակի և կովկասահայ կեանքի այլ երևոյթների մասին։ Ի միջի այլոց պ. Տէր Ղևոնդեանի կարծիքը միանգամայն աննպաստ էր Թիֆլիսի Բիւրօյի մասին։



ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՈԼԳԱՅԻ ԱՓԵՐԻՑ

I

Վաղ առաւօտեան մեր նաւը հասնում է Ցարիցին և դանդաղ մօտենում նաւահանգստին։ Շոգենաւում դեռ շատերը քնած են։ Ես հագնւում եմ և իջնում քաղաք։ Առաջին տպաւորութիւնը, որը թողնումէ քաղաքը նորեկի վրայ չափազանց աննպաստ է։ Կեղտոտ, շատ տեղերում չը սալահատակած, փողոցներ, անճաշակ տներ, աննկարագրելի փոշի, բարեկարգութեան իսպառ բացակայութիւն, ահա ամէն ինչի ես հանդիպում առաջին հայեացքին։

Ցարիցինը ունի մօտ 80 հազար բնակիչ և խոշոր առևտրական կենտրոն է հանդիսանում, իբրև փոխադրական կէտ ցորենի, ձկան և այլ ապրանքների։ Ցարիցինը յայտնի է նաև իւր արդիւնաբերութեամբ։ Գոյութիւն ունենն մի շարք գործարաններ, որոնց մէջ առաջին տեղն է բռնում քաղաքի շրջակայքում գտնւող ֆրանս-ռուսական գործարանը, իւր տասնեակ հազարաւոր բանւորներով, ծրագրւում է նոր գործարանների բացումն ինչպէս թնդանօթային և այլն։ Քաղաքը ունի բաւականին խոշոր բիւջէ, որից սակայն քաղաքի բարեկարգութեան վրայ շատ քիչ բան է ծախսւում։


Ցարիցինի հայ գաղութը հաշւում է մօտ 300 հոգի, որի մեծ մասը կազմում են Արդւինի շրջանից եկած կօշկակար-բանւորներ։ Կան նաև մի քանի խոշոր առևտրական տներ, ինչպէս օրինակ Եղբարք Ղազարեաններ, Հախվերդեան և ուրիշներ։ Ունին մի գեղեցիկ և բաւականին ընդարձակ եկեղեցի և մշտական մի քահանայ։ Եկեղեցին շինուած է սրանից ընդամենը 6—7 տարի առաջ։ Այդտեղ էր գալիս աղօթելու մի ժամանակ յայտնի Իլիոդոր աբեղան իւր հետևորդներով, երբ նրանց ոստիկանական ոյժով դուրս հանեցին ռուսական վանքից։ Քահանան հոգս է տանում նաև հայ մանուկների մայրենի լեզուն սովորելու վրայ։

Գաղութի կեանքը չափազանց անգոյն է և սառն։ Չը կան կուլտուրական, հասարակական և այլ հաստատութիւններ, պակասում են ինտելիգենտ ոյժեր։ Բանւորութիւնը նոյնպէս ողորմելի վիճակի մէջ է։ Աշխատանքի ժամերը տևում են յաճախ 16—18 ժամ։ Վարձադինը շատ չնչին է շնորհիւ դասակարգային գիտակցութեան բացակայութեան։

Գաղութի միապաղաղ կեանքը վերջերս մի քիչ կենդանութիւն ստացաւ։ Շնորհիւ տիկին Սաթենիկ Ղազարեանի եռանդուն ջանքերին, մեծ քանակութեամբ իրեր և դրամ հաւաքեց և ուղարկեց Կովկասի հայ փախստականներին և կամաւորների վեցերորդ բանակին։ Զափազանց մխիթարական էր Ծարիցինի նման մի յետամնաց խուլ անկիւնում տեսնել մի հայ տիկնոջ այդպիսի անխոնջ և անձնուէր գործունէութիւնը։ Հաւաքելով այդ մի քանի համառօտ տեղեկութիւնները Ծարիցինի և նրա հայ գաղութի մասին, ես ստիպուած էի վերադառնալ յոգնեալ շարունակելու իմ ճանապարհորդութիւնը դէպի Սարաթով։

ՈՒՂԵՒՈՐ

25 Մայիս 1915 թ.
Սարաթով



ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ընթացիկ շաբաթուայ դէպքերը գալիս են հաստատելու այն համոզումը, որ համաշխարհային պատերազմը դեռ շատ հեռու է իր վախճանից։ Գերմանիան հակառակ նրան, որ իր վերջին ուժերը սպառելու վրայ է, դեռ օրերս Բեթման Գոլվեգի բերանով յայտարարեց, որ առաջիկայ ձմեռուայ համար պատրաստութիւններ է տեսնում պատերազմը շարունակելու համար։

Թէ որքան իրական արժէք ունի այդ յայտարարութիւնը, պարզ ցոյց են տալիս այն օրհասական գալարումները, որոնք տեղի են ունենում վերջերս Գերմանիայում։

Արեւելեան ռազմաբեմում աւստրօ-գերմանական ճիգերը հասել են իրենց ծայր աստիճանին։ Գալիցիայում նրանց յաջողւեց գրաւել Պերեմիշլի աւերակները, սակայն աւելի առաջանալ անկարող եղան հանդիպելով մեր զորքերի ուժգին դիմադրութեան։ Բուկովինայում ընդհակառակը մեր զորքերին յաջողւեց յետ մղել աւստրիացիներին և բաւականին առաջանալ։ Շավլիի ուղղութեամբ շարունակւող կռիւները ընդհանրապէս ընթանում են մեզ համար նպաստաւոր պայմաններում։ Գերմանական նաւատորմիղը վերջերս փորձեց մտնել Րիգայի ծովածոցին, բայց ենթարկւելով մեր ականաւերի և սուզանաւերի յարձակման հեռացաւ կորցնելով երեք նաւ։

Արեւմտեան ռազմաբեմում շարունակւում են սովորական ընդհարումները առանց վճռական հետեւանքի։ Իտալական բանակի գործողութիւնները ևս առ այժմ առանձին բնորոշ բնաւորութիւն չեն կրում։ Միայն Իտալական նաւատորմիղին և օդաչուներին յաջողւեց ռմբակոծել Պոլա և Ֆիումէ զինւորական նաւահանգստները։

Երիտասարդ թիւրքերի և աւստրիական դեսպաններին նորից յաջողւեց կազմակերպել ալբանացիներից զինւած խմբեր և յարձակւել Սերբիայի վրայ։ Սերբիացիք այս անգամ ևս ջարդելով ալբանացիներին ստիպւած եղան գրաւել Ալբանիայի մի քանի սահմանամերձ, ռազմական նշանակութիւն ունեցող, կէտերը ապահովացնելու համար իրենց ապագայ յարձակումներից։

Անգլօ-ֆրանսական բանակի և նաւատորմիղի մղած կռիւը Դարդանելում և Գալլիպոլեան թերակղզում մեծ յաջողութեամբ առաջ է տարւում և ինչպէս հաւաստացնում են մինչև յունիսի երկրորդ կէսը դաշնակից զօրքերը կը լինեն Պոլսում։ Մեր սև ծովեան նաւատորմիղը նոյնպէս շարունակում է սիստեմատիկ կերպով իր յարձակումները թիւրքական ծովեզրեայ ամրութիւնների վրայ։

Ռուսական բանակի առաջխաղացումը դէպի Տաճկաց հայաստանի խորքերը շարունակւում է նախկին եռանդով։ Արդէն գրաւած են Վանի ամբողջ շրջանը, Մանազկերտը, Նոփը, Մշոյ սանջակի մեծ մասը։ Հիւսիսում գրաւած է Զօրխի, և Թորթումի շրջանները։ Ատրպատականում Թավրիզից դուրս եկած զօրամասը անցել է Միանդաբը Սօվուջ-Բուլակը և դուրս վանելով բոլոր քրդական հրոսախմբերը հասել է Ուրմիին, այդպիսով ազատելով ամբողջ Ատրպատականը թիւրք-քրդական զինւած ուժերի ներկայութիւնից։

Պոլսի անկման վտանգը և Բալգարիայ հաւանական յարձակումը ստիպեցին թիւրքաց կառավարութեանը, որոշ չափով փոխել կովկասեան ռազմաբեմի պատերազմական գործողութիւնների նախնական ծրագիրը։ Զօրքերի կենտրոնացումը այժմ տեղի է ունենում Պոլսոյ շրջակայքում և նոյնիսկ Էրզրումի բերդային խոշոր թնդանօթների մեծ մասը տարւել են Պոլսոյ պաշտպանութեան համար։



ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԻՆՉՊԷՍ ԵՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

Աստրախանում այգեգործութեան դառն աշխատանքները սկսել են և ամեն մի այգետէր լինի նա ռուս, հայ կամ թաթար, իր այգում աշխատեցնում է տասնեակներով բանւորներ և բանւորուհիներ, որոնց մեծ մասը Վոլգեան զանազան քաղաքներից են։

Այգեգործութեամբ զբաղւող բանւոր-բանւորուհիները և անչափահաս երեխաները, իրենց առօրեայ աշխատանքը սկսում են վաղ առաւօտեան ժամը 3-ից և վերջացնում երեկոյեան ժամը 8—9-ին երբեմն 10-ին և ի փոխարէն այդ տաժանակիր աշխատանքի զուցէ անհաւատալի թւայ, եթէ ասեմ, որ բանւորները ստանում են ամսական 15—20 րուբլի, իսկ փորձւած ծառայողները այն ևս հազւագիւտ դէպքերում, բանւորուհիները 7—9 րուբլի, իսկ անչափահասները ընդամենը 3—5 րուբլի։

Բայց չնչին վարձատրութիւնը շատ թանգ է թւում այգետէրերին և նրանք ամառուայ այդ անտանելի պայմաններում աշխատեցնելուց յետոյ, ձմեռը, երբ գործերը մի քիչ թեթեւանում են և աշխատող ձեռքերը շատանում, նախ երկարացնում են աշխատանքի ժամերը և ապա կրճատում աշխատավարձի ½ մասը։

Տարւայ ամառնային ամիսներին, երբ աշխատանքները աւելի ուժգին թափով են առաջ տարւում և բանւորները ստիպւած են իրենց վերջին ուժերը լարել, այգետէրերը իբրև ողորմութիւն տալիս են նրանց օրեկան 2—3 ֆունտ հաց ամենաստորակ տեսակից, 2 կտոր շաքար և մի մախալ թէյ, իսկ ճաշին կամ հոտած միսից, որ յաճախ պատահել եմ X-ի այգում և կամ արևածաղիկի իւղից եփած սուպ, որը սուպից բացի ամեն բան կարելի է անւանել։

Անչափահաս երեխաները, աղջիկները և կանայք, ինչպէս նաև տղամարդիկ, ամառնային անտանելի շոգերում, զուրկ լինելով առողջարար կերակրից յաճախ հիւանդանում են վարակիչ հիւանդութիւններով։

Այն այգիներում, ուր մեծ թւով բանւորուհիներ են աշխատում տէրերը կամ նրանց գործակատարները չը բաւականանալով տնտեսական շահագործումով, յաճախ իրենց անասնական կիրքերին բռնի կերպով զոհ են բերում խեղճ բանւորուհիների և նոյն իսկ անչափահաս աղջիկների պատիւը։ Եւ այգետէրերի այդ դժբաղդ զոհերը ստիպւած են լինում մրմուռը սրտներին տանել, ամեն մի անարգանք հակառակ դէպքում եթէ բողոքելու փորձեր են լինում, նրանց անմիջապէս փողոց են շպրտում։

Այս տարի էլ չը նայած, որ պատերազմի պատճառով բանւորների թիւը պակաս է, բայց և այնպէս բանւոր - բանւորուհիները շնորհիւ իրենց ծով կարիքների և հակառակ նրան, որ ապրուստի միջոցները և կենսական անհրաժեշտ մթերքները չափազանց թանգացել են, յանձն են առնում նախին անտանելի պայմաններում և չնչին վարձադրով աշխատել, ծախելով իրենց պատիւը մի կտոր չոր հացի համար։

ԲԱՆՒՈՐ

Խմբագիր հրատարակիչ՝
ՎԱՀԱՆ ՂՈՒԿԱՍԵԱՆ։
Ред.-изд. В. Тукасьянъ.

Дозволено военной цензурой. Астрахань. Типо-литографія Т-во „Печатн. Дѣла" Окуръ, Апресянцъ и Винниковъ.